ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական
կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Տնօրեն՝ Գրահամ Սթրոնգ
12 դեկտեմբեր, 2011թ.

« Լոռու մարզի Ճոճկան համայնքի մանկապարտեզում ջեռուցման համակարգի տեղադրում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նպաստել Ճոճկան համայնքի երեխաների նախակրթարանային ուսուցման գործընթացին՝ Լոռու մարզի Ճոճկան համայնքի մանկապարտեզում տեղադրելով ջեռուցման համակարգ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MSKI5, OZR, United Kingdom* |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լոռու մարզի Ճոճկան համայնք:<br>Բնագավառը՝ Կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 1837091 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լոռու մարզի Ճոճկան համայնքի մանկապարտեզ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011թ.-ի դեկտեմբերի 01-ից դեկտեմբերի 25-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է ջեռուցման համակարգի տեղադրումը իրականացնել նշված համայնքի մանկապարտեզում մինչև 2011թ.-ի դեկտեմբերի 25-ը: Տեղադրման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է՝ 1,837,091 դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «ԻՄԵՔՍ ԳՐՈՒՊ» |

| | | |
|---|---|---|
| | ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՍՊԸ-ի հետ (պայմանագրի և հավելվածների օրինակները կցվում են): Տեղադրման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է ՝ 1,837,091 (մեկ միլիոն ութ հարյուր երեսունյոթ հազար իննսունմեկ) դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունը համագործակցում է Ճոճկան համայնքի մանկապարտեզի և տեղական ինքնակառավարման մարմնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի կողմից ինչպես նաև «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչների կողմից: Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության համապատասխան բաժինների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի կողմից:<br><br>Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: |

Շաղիկ Մարուխյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի գործառնությունների ղեկավար

[signature]

27-18/13